ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН
ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
Р У К О В О Д И Т Е Л Ь
THE ENVIRONMENTAL PROTECTION AND
MINING INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA
H E A D

№ 16.1/16.1/812-18

«25» Հոկտեմբերի 2018թ.

«Հետք», թերթի լրագրող
Քրիստինե Աղալարյանին

Հարգելի տիկին Աղալարյան,

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին (այսուհետ՝ Տեսչական մարմին) հասցեագրված Ձեր հարցմանն ի պատասխան տրամադրում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Տեսչական մարմնի կողմից «ՎԱՅՔԳՈԼԴ» ՍՊ ընկերությունում ստուգում է իրականացրել 2018 թվականի ապրիլի 23-27-ը և օգոստոսի 6-14-ն ընկած ժամանակահատվածներում: Ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը եղել է 2012 թվականի նոյեմբերի 23-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 14-ը ներառյալ: Ստուգման արդյունքում «05» սեպտեմբերի 2018 թվականին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից ընդունվել է **«ՎԱՅՔԳՈԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում իրականացված ստուգման վերաբերյալ «ԱԿՏ 34»** ստուգման ակտը՝ հետևյալ բովանդակությամբ՝

Ստուգման արդյունքում պարզվել է, որ՝

1. Ընկերության կողմից լիազոր մարմնին 15.11.2012թ. ներկայացված հանքավայրի արդյունահանման նախագիծը չի ենթարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված շրջակա միջավայրի ազդեցության և տեխնիկական անվտագության փորձաքննությունների: Փաստացի «ՎԱՅՔԳՈԼԴ» ՍՊ ընկերությանը արդյունահանման թույտվությունը տրամադրվել է «Արմենիակ» ՍՊ ընկերության 08.08.2006թ. N ԲՓ-87 շրջակա միջավայրի ազդեցության և 28.11.2006թ. N 395 տեխնիկական անվտագության փորձաքննությունների դրական եզրակացությունների հիման վրա:
2. Ընկերությունը թիվ Լ-371 լեռնահատկացման ակտով տրամադրված կոորդինատներով եզրագծված ընդերքի տեղամասի սահմաններում 2014 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև 2015 թվականի հունվարի 23-ը և 2016 թվականի մայիսի 29-ից մինչև հուլիսի 08-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել է երկրաբանահետախուզական հորատման աշխատանքներ: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հանքավայրում իրականացվել են ճանապարհների լայնացման և վերանորոգման, հորատհրապարակների կառուցման և մեխանիկական սյունակային հորատման (9991,8գծ.մ) աշխատանքներ: Երկրաբանահետախուզական աշխատանքները 22.09.2014թ. թիվ ԵՖ-14-21 հաշվառման համարով գրանցվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում:

Չարենցի փող. 46, 0025 Երևան, ՀՀ
46 Charents Str., 0025 Yerevan, RA

☏ +374 11 818 585
Էլ. փոստ՝ artur.grigoryan@mnp.am
Веб-сайт: www.mnp.am

3. Ընկերությունը 2017 թվականի դեկտեմբերին հանքավայրում իրականացրել է 1330 տ. հանքաքարի արդյունահանում: Արդյունահանված հանքաքարում մետաղների քանակները կազմում են ոսկի՝ 11,31 կգ., արծաթ՝ 84,5 կգ., պղինձ՝ 5,25 տ.:
4. Վերը նշված արդյունահանված հանքաքարը չի արտացոլվել Ընկերության կողմից լիազոր մարմնին ներկայացված 2017 թվականի համար նախատեսված 5 ՕՀՊՀ և 70 ՏԱ հաշվետվություններում:
5. Արդյունահանման ընթացքում տեղամասում շահագործական հետախուզություն, ինչպես նաև երկրաբանական և մարկշեյդերական աշխատանքներ չեն իրականացվել:
6. Ընկերության կողմից չեն հավաքագրվել և պահպանվել ուսումնասիրված, արդյունահանված և ընդերքում կորսված օգտակար հանածոների պաշարների, նրանցում պարունակած բաղադրամասերի որակի ու քանակի վերաբերյալ տվյալները:
7. Մակաբացված ապարները տեղադրվել են արդյունահանված տեղամասի հարակից տարածքում:
8. Ընկերությունը երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու նպատակով Ազատեկ, Զառիթափ և Վայք քաղաքային համայնքների հետ 25.09.2014թ. և 01.06.2016թ. (բացառությամբ Վայք քաղաքային համայնքի) կնքել է հողմասի վարձակալության պայմանագրեր՝ եռամսյա ժամկետով: 2017 թվականի դեկտեմբերին Ընկերության կողմից հանքաքարի արդյունահանումն իրականացվել է առանց հողի վարձակալության և նպատակային նշանակության փոփոխության:
9. Ընկերությունը չունի օգտակար հանածոների պաշարների շարժի գրանցամատյան:
10. Ընկերությունը 2012 և 2013 թվականների համար նախատեսված 70ՏԱ և 71ՏԱ հաշվետվությունները լիազոր մարմնին չի ներկայացրել:
11. Ընկերության կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարները չեն կատարվել, ապառքն առ 01.04.2018 թվականի դրությամբ կազմում է 1715,88 հազ. դրամ:
12. Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարները չեն կատարվել:
13. Ընկերության կողմից չեն կատարվել Պ-371 ընդերքօգտագործման պայմանագրի հավելված 1-ով սահմանված ֆինանսական առաջարկները:
14. Ընկերությունը 30.11.2012 թ. կնքված և 21.01.2015թ. փոփոխված թիվ Պ-371 ընդերքօգտագործման պայմանագրի 2.1 կետով պարտավոր էր երկամյա ժամկետում կատարել լեռնակապիտալ աշխատանքներ, որից հետո հանքավայրում իրականացնել հանքաքարի արդյունահանման աշխատանքներ՝ տարեկան 300 հազ. տ. օգտակար հանածոյի պաշարների մարմամբ:

Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի, 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին,4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 11-րդ կետերի, 61-րդ հոդվածի 2-րդ մասի, 65-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N274-Ն որոշման 50-րդ կետի, ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 19-ի N911-Ն որոշման, ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N437-Ն որոշման N1 հավելվածով հաստատված պայմանագրի հավելված N1-ի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի, 36-րդ հոդվածի 5-րդ մասի, 110-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջները:

Նշված խախտումները Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի, 54^2-րդ հոդվածի,54^4-րդ հոդվածի 2-րդ պարբերության, 60^1-րդ հոդվածի 4-րդ պարբերության և 94^1-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն առաջացնում են վարչական պատասխանատվություն:

Ստուգման ակտի հիման վրա «18» սեպտեմբերի 2018 թվականին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի կողմից ընդունվել է **համ. 34-Ա որոշումը ընդերքօգտագործման գործողություններն արգելելու մասին**՝ հետևյալ բովանդակությամբ՝

Ընկերության կողմից լիազոր մարմնին 15.11.2012թ. ներկայացված հանքավայրի արդյունահանման նախագիծը չի ենթարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված շրջակա միջավայրի ազդեցության և տեխնիկական անվտագության փորձաքննությունների: Փաստացի «ՎԱՅՔԳՈԼԴ» ՍՊ ընկերությանը արդյունահանման թույտվությունը տրամադրվել է «Արմենիակ» ՍՊ ընկերության 08.08.2006թ. N ԲՓ-87 շրջակա միջավայրի ազդեցության և 28.11.2006թ. N 395 տեխնիկական անվտագության փորձաքննությունների դրական եզրակացությունների հիման վրա:

Ընկերության կողմից լիազոր մարմնին 15 նոյեմբերի 2012 թվականին ներկայացված հանքավայրի արդյունահանման նախագծի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված շրջակա միջավայրի ազդեցության և տեխնիկական անվտագության փորձաքննությունների եզրակացությունների տրամադրման վերաբերյալ Տեսչական մարմնի կողմից հարցում է կատարվել ՀՀ բնապահպանության և արտակարգ իրավիճակների նախարարություններին, որին ի պատասխան բնապահպանության նախարարությունից տեղեկացրել են, որ հանքավայրի շահագործման աշխատանքային նախագիծը չի ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, իսկ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հարցմանն ի պատասխան տեղեկացրել է, որ իր կողմից վարվող արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում «ՎԱՅՔԳՈԼԴ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված օբյեկտներ չկան, ինչպես նաև տեխնիկական անվտանգության փորձաքննությունների եզրակացությունների վերաբերյալ տեղեկատվություն չունեն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը, առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով, «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի ե) կետով՝

1. Արգելել «ՎԱՅՔԳՈԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից՝ Վայոց ձորի մարզի Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայրում, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումը:
2. Հանձնարարել «ՎԱՅՔԳՈԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Վայոց ձորի մարզի Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայրում օգտակար հանածոյի

արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումն իրականացնել բացառապես սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի առկայության դեպքում:

Ստուգման ընթացքում լրացուցիչ մասնագետներ ներգրավելու անհրաժեշտություն չի առաջացել:

Հարգանքով,

Արթուր Գրիգորյան

ՀՀ բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար